



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ 4-61-92  
Fax 2-28-77

թիվ \_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2019 թ.

«Առողջապահության քաղաքականության  
և նորարարության կենտրոն» ՀԿ-ի  
ծրագրերի ղեկավար Լիլիթ Գևորգյանին

Ձեր 25.03.2019թ. գրությանը՝

Հարգելի տիկին Գևորգյան

Տեղեկացնում եմ Ձեզ, որ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2018 թվականի փետրվարի 21-ի «Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովի ձևավորման և գործունեության մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 457-Ա հրամանը, ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայությամբ գործող առողջապահական ընկերություններում ՀՀ Լոռու մարզպետի 2018թ. մարտի 14-ի «Ուղեգրող հանձնաժողովներ ստեղծելու մասին» թիվ 75-Ա, այնուհետև ՀՀ Լոռու մարզպետի 2018թ. դեկտեմբերի 27-ի «Ուղեգրող հանձնաժողովներ ստեղծելու մասին» թիվ 429-Ա որոշումներով ստեղծվել են մշտական գործող հանձնաժողովներ:

Առդիր 4 էլ. ֆայլ: **/Կցվում են ՀՀ Լոռու մարզպետի «Ուղեգրող հանձնաժողովներ ստեղծելու մասին» թիվ 75-Ա և թիվ 429-Ա որոշումները՝ հավելվածներով/:**

Միաժամանակ հայտնում եմ, քանի որ Ձեր կողմից պահանջվող տեղեկատվությունը կարող է պարունակել անձնական տվյալներ, որոնց գաղտնիությունը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ, հետևաբար Ձեզ եմ տրամադրում թվային տվյալներ: 2018թ.«Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի /ՈՒՀ 21/ կողմից մերժվել է 1 դիմում՝ սահմանված կարգով փաստաթղթեր չներկայացնելու հիմքով:

Առողջապահական ընկերություն /ՈՒՀ?	Տրված ուղեգրերի քանակը 2018թ.	մերժումների քանակը	Տրված ուղեգրերի քանակը 2019թ. /1-ին եռամսյակ/	մերժումների քանակը
«Վանաձորի թիվ 1	61	0	13	0

պոլիկլինիկա» ՊՓԲԸ /ՈՒՀ 20/				
«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ /ՈՒՀ 23/	16	0	1	0
«Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ /ՈՒՀ 22/	18	0	5	0
«Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ /ՈՒՀ 21/	8	1	0	0
«Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ /ՈՒՀ 24/	8	0	0	0

Հարգանքով՝

 Invalid signature

X 

ԱՆՆԻՅՑ ԴՈՒԿԱՍՅԱՆ

Ա. ԴՈՒԿԱՍՅԱՆ